ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«____» _____ 2024թ. N ____- Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ (ՆՎԻՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 50-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեի «Վարչական օբյեկտների կառուցում և հիմնանորոգում» ծրագրով ձեռք բերված 17,520,000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր քսան հազար դրամ) ՀՀ դրամ ընդհանուր արժեքով թվով 2 վերելակները սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) «Երևանի «Ավան» առողջության կենտրոն» ՓԲ ընկերությանը:
2. Երևանի քաղաքապետին՝ ապահովել «Երևանի «Ավան» առողջության կենտրոն» ՓԲ ընկերության հետ նվիրատվության պայմանագրի և հանձնման-ընդունման ակտի կնքումը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ (ՆՎԻՐԵԼՈՒ) ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի բյուջեի միջոցների հաշվին 2023 թվականին կնքված ԵՔ-ԲՄԱՊՁԲ-23/6 պայմանագրով Երևանի «Ավան» առողջության կենտրոն ՓԲ ընկերության թվով 2 վերելակները փոխարինվել են նորով: Նոր վերելակները ձեռք են բերվել 17,520,000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր քսան հազար դրամ) ՀՀ դրամ արժեքով և ներկայումս վերելակների փաստացի շահագործումը և պահպանումը իրականացվում է Երևանի «Ավան» առողջության կենտրոն ՓԲ ընկերության կողմից:

Ելնելով վերոգրյալից՝ Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում «Գույքը սեփականության իրավունքով անհատույց օտարելու (նվիրելու) մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ